

ՀԱՆԳԻՍՏ
Տ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ՔԱՀԱՆԱ ԵՍԱՅԱՆԻ
(1912—1985 թթ.)



1985 թվականի մայիսի 6-ին, կյանքի 73-րդ տարում, Աշտարակ քաղաքում վախճանվեց Տ. Հարություն քահանա Եսայանը:

Հանգուցյալը ծնվել է Պարսկաստանի Փերիա գավառի Խունգ գյուղում:

Նախնական կրթությունը ստացել է նախ տեղի, ապա Նոր Ջուղայի դպրոցներում:

1942—1945 թվականներին սովորել է Նոր Ջուղայի հոգևոր դպրոցում:

Նույն թվականին, հոգևոր դպրոցն ավարտելուց հետո, հոկտեմբերի 16-ին, ձեռնադրվել է քահանա՝ ձեռամբ Տ. Վահան արքեպիսկոպոս Կոստանյանի:

Քահանայագործելու իսկ օրից մինչև 1968 թվականը տեր հայրը ծառայել է Պարսկաստանի տարբեր եկեղեցիներում:

1968 թվականին տեղափոխվել է Թեհրան և ծառայել տեղի Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցում:

1971 թվականին Տ. Հարություն քահանայի ընտանիքը տեղափոխվել է մայր հայրենիք և բնակություն հաստատել Աշտարակ քաղաքում:

Իր կյանքի վերջին տարիներին հանգուցյալ տեր հայրը, որպես հոգևոր հովիվ, ծառայում էր Ապարանի շրջանում:

1984 թվականին, իր անբասիր ծառայության համար, Տ. Հարություն քահանան Տ. Տ. Վազգեն Ա Ամենայն Հայոց Հայրապետի կողմից արժանացել է քահանայական լանջախաչ կրելու իրավունքի:

Մայիսի 8-ին, չորեքշաբթի օրը, Աշտարակի Ս. Մարիանե եկեղեցում կատարվում է հանգուցյալի վերջին օծման կարգը՝ ձեռամբ Արարատյան հայրապետական թեմի առաջնորդական փոխանորդ Տ. Գարեգին եպիսկոպոս Ներսիսյանի: Վերջին օծման կարգը կատարելուց հետո, սրբազան հայրը դամբանական է խոսում՝ վեր հանելով հանգուցյալ տեր հոր արժանիքները որպես համեստ, հավատավոր և նվիրված հոգևորականի:

Հանգուցյալի մարմինը ամփոփվում է Աշտարակի քաղաքային գերեզմանատանը:

Թող Աստված հոգին լուսավորի հանգուցյալ Տ. Հարություն քահանայի: